

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների դրամական բազան 2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 66116 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն աճել է 12263 մլն. դրամով կամ 22,8%-ով, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ համապատասխանաբար՝ 16033 մլն. դրամով կամ 32,0%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 8281 մլն. դրամով կամ 14,3%-ով:

2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 145234¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել է 35780 մլն. դրամով կամ 32,7%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար՝ 38158 մլն. դրամով կամ 35,6%-ով, իսկ 2000թ. հոկտեմբերի վերջի նկատմամբ՝ 13720 մլն. դրամով կամ 10,4%-ով: Նախորդ ամսվա նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ ներքին և զուտ արտաքին ակտիվների աճով համապատասխանաբար՝ 1750 և 11970 մլն. դրամով:

Դրամական զանգվածի աճը 2000թ. նոյեմբեր ամսում ուղեկցվել է բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի, ցպահանջ դեպոզիտների և ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների աճով համապատասխանաբար՝ 12,5%-ով (5667 մլն. դրամով), 17,1%-ով (2097 մլն. դրամով) և 8,0%-ով (5956 մլն. դրամով): Ընդ որում ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 55,0% և տարեսկզբի համեմատ աճել է 2,7 տոկոսային կետով:

Դրամական զանգվածն ըստ բաղադրատարրերի 2000թ.

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	1999թ. դեկտեմբեր	2000թ.					
		հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
Դրամական զանգված, ընդամենը	109454	102822	111202	120371	129697	131514	145234
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	93.9	105.8	107.4	102.4	101.4	110.4
տոկոսով ընդամենը այդ թվում՝	100	100	100	100	100	100	100
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	42610	34839	36639	39286	44158	45272	50939
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	81.8	105.4	106.2	101.1	102.5	112.5
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	38.9	33.9	33.0	32.6	34.0	34.4	35.1
Ցպահանջ դեպոզիտներ	9617	11561	10606	11286	12689	12245	14342
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	120.2	107.3	107.7	112.4	96.5	117.1
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	8.8	11.2	9.5	9.4	9.8	9.3	9.9
Ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտներ	57227	56422	63957	69799	72850	73997	79953
տոկոսով նախորդ ամսվա նկատմամբ	x	98.6	105.8	108.1	101.5	101.6	108.0
տեսակարար կշիռը դրամական զանգվածում	52.3	54.9	57.5	58.0	56.2	56.3	55.0

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը 2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 70733 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից

1 Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-նոյեմբերին»

Ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 74501 մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 1999թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ աճել են 21477 մլն. դրամով կամ 40,5%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 5804 մլն. դրամով կամ 8,4%-ով: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 51,3% և նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ աճել 2,9 տոկոսային կետով, իսկ 2000թ. հոկտեմբերի վերջի համեմատ նվազել՝ 0,9 տոկոսային կետով:


Դրամական զանգվածի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	1999թ.	2000թ.					
	դեկտեմբեր	հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր
Դրամական զանգված	100	100	100	100	100	100	100
այդ թվում ազգային արժույթով	51.6	49.5	47.7	46.4	47.0	47.8	48.7
արտարժույթով	48.4	50.5	52.3	53.6	53.0	52.2	51.3

Դրամական զանգվածի տարրերի դինամիկան 2000թ. հունվար- նոյեմբերին

մլն. դրամ



Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը նոյեմբերին հավասարվել է 2,2-ի:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը¹ 2000թ. նոյեմբերին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է 23%:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 109426¹ մլն. դրամ և նոյեմբերի 1-ի համեմատ աճել են 1856 մլն. դրամով կամ 1,7%-ով, իսկ տարեսկզբի նկատմամբ՝ համապատասխանաբար 19299 մլն. դրամով կամ 21,4%-ով:

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

¹ ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքին:

	1999թ.	2000թ.						
	1.12	1.01	1.04	1.07	1.09	1.10	1.11	1.12
Վարկային ներդրումներ², ընդամենը	72389	74397	80518	87838	96552	94832	103004	94443
<i>այդ թվում՝</i>								
կարճաժամկետ	40565	41272	36588	42163	39621	36166	39053	38102
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	56.0	55.5	45.4	48.0	41.0	38.1	37.9	40.3
երկարաժամկետ	31824	33125	43930	45675	56931	58666	63951	56341
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	44.0	44.5	54.6	52.0	59.0	61.9	62.1	59.7
որից՝ վարկեր տարադրամով	59989	60630	68623	76794	84419	82828	89521	80503
<i>այդ թվում՝</i>								
կարճաժամկետ	33009	32941	30740	37842	35170	32771	34410	33653
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	55.0	54.3	44.8	49.3	41.7	39.6	38.4	41.8
երկարաժամկետ	26980	27689	37883	38952	49249	50057	55111	46850
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	45.0	45.7	55.2	50.7	58.3	60.4	61.6	58.2

2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 11449 մլն. և 13458 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 2898 մլն. դրամով կամ 33.9%-ով, իսկ ժամկետանց վարկերը համապատասխանաբար՝ 3528 մլն. դրամով կամ 35,5 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված վարկերը նվազել են 774 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերն աճել՝ 1261 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 15102 մլն. դրամով կամ 49,2%-ով և 2000թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել՝ 45787մլն. դրամ, իսկ նոյեմբերի 1-ի նկատմամբ աճել է 875 մլն. դրամով կամ 1,9%-ով:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2000թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 556885, որից ֆիզիկական անձինք՝ 486481, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 391023 և 301250: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

2000թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 385503,4 մլն. դրամ (նոյեմբերին՝ 42905,4 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 393545,8 մլն. դրամ (նոյեմբերին՝ 49005,6 մլն. դրամ): Ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 8042,4 մլն. դրամով (նոյեմբերին՝ 6100,2 մլն. դրամով): 2000թ. հունվար-նոյեմբերին արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 113134,4 մլն. դրամ (նոյեմբերին՝ 13648,6 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 104718,0 մլն. դրամ (նոյեմբերին՝ 10798,9 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 8416,4 մլն. դրամով (նոյեմբերին՝ 2849,7 մլն. դրամով):

¹ Ըղգրկված են հաշվարկված տոկոսները:

² Ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը: